# ԱԶԴԱՐԱՐ

## ՆԱԽԱՑ ԱՄՍՈՑ

1795

Յեղանակաց Պատմութեան Պարսից արտիցելոց 'ի Խաչատուր Թովմայ Վարդապետէ Նոր Ջուղայեցւոյ, Ամենայն Ռուսաց Հայոց Առաջնորդէն, և այժմ ... է 244 Էջերէ էջէ Հնդկ. ազգաց Առաջնորդէ ։

Թուական ՓԵ

Ի 'ի 1071 Թուականիս մերոյ էառ Նորբայն Նբաշ զՂանդահար քաղաքն 'ի ձեռաց Հնդկաց Նոբայի ։ Քանզի քաղաքն Ղանդահար՝ նախ էր ընդ իշխանութեամբ Պարսից, իսկ յետ Նոցա վերցաւ զԹագաւորութիւն Խուդաբանդային ; զայն Թագաւորն Հնդկաց առնու զքաղաքն՝ և նուաճէ ընդ իշխանութեամբ իւրով ։ Նոյն 'ի յայսմ ամիս չուեալ գնայ Շահ Աբաս 'ի վերայ քաղաքին մտանել, և մինչև ցերիս ամիս պաշարէ զբերդ քաղաքին՝ և կրկին ընդ ձեռամբ իւրով ճնշէ զիշխանութիւն բերդին ։

Իսկ 'ի 1073 Թուոյս մերում առնու ըզՔանդահար քաղաք 'ի յօտարեաց, պաշարեալ զքաղաքն՝ չորեք ամսեայ ժամանակաւ ։ Իբր տապ առեալ զբերդն՝ մտանեն 'ի ներս 'ի քաղաքն սպահանգ.

| Թուական Քն | Թուական Հայոց |
|---|---|
| | |

պորսից, որք և անճար արարին զքաղաքն, և աս-
պատակեալ կապտեցին զամ ինչս նոցա, և զոգի-
եթէ մեծ, և եթէ փոքր՝ իբրև իննսուն հազար
'ի սուր սուսերի մաշեցին ։ իբրև նուաճէ զքա-
ղաքն ընդ իշխանութեամբ իւրով՝ իսկ ապա այնու-
հետև հրամայէ նորոգել զպարիսպ ամրոցին, և
առ որով կառուցանել զբարձրաբերձ և պնդաշի-
աշտարակս ութն՝ 'ի պահպանութիւն ընդ դէմ
թշնամեաց, և կացուցանէ զՅէֆիզուլի խան ոմն՝
որ էր ազգաւ հայ, մարզպան և ոստիկան քաղաքին
այնորիկ և ցնա ըՌ այր պատերազմօղս ։ Իւր ապա
ինքն անցանէ անտի զկնի ձմերանն՝ և գայ մտանէ
մեծաւ յաղթութեամբ յՆախիջևան քաղաք ։

Բայց գործեաց սա գէր ինչ առ պաշար-
մամբն Բաղդատայ, որ արժանի իսկ է յիշատակե-
լոյ, վասն որոյ ճահաւոր վարկանիմ ասել 'ի մա-
տենիս և զայն ևս զքեզ ծանուցանել, որով իմա-
ցիս իսկ արդեօք զհնարագիտութիւն և զմարդա-
շահութիւն նորին ։ Քանզի ասեն թէ՝ սա մինչ
տակաւին պաշարեալ էր զքաղաքն, և կայր շուրջ
զնովաւ, սպառի դրամն՝ և առ և ոչ ինչ պակասի
զօրացն՝ որք 'ի բանակի անդ էին ։ Զի ոչ գոյր
այն դրամս 'ի ներ բանակի Շահին Պարսից առ
'ի որով գնել՝ և վճարել զկարևոր պիտոյս իւ-
րեանց, վասն որոյ բողոքեն ամ զօրք՝ առ շահն ա-
սելով, կամ տուր մեզ հաց, և կամ դահեկան
տարկաս, որով կարասցուք գնել՝ և վճարել,
և զհայթայթանս պարենից մերոց գտանել, և կամ
թէ ոչ՝ թող արդեօք զզօրս պատերազմէն՝ զի
արձակեալ գնասցուք իւրաքանչիւրոք 'ի տեղիս
և 'ի բնակութիւնս մեր, և անդ վաստակօք մերով
'ի գործս՝ կեցցուք ։ Յայնժամ լսէ զայսպիսի
Շահն 'ի Զօրավարաց՝ անձարացեալ՝ ապա-
լայն մեծաւ շնորհի, թէ [illegible] գոն

գոր

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР

| Թուական Հայոց | Թուական Քն |
|---|---|

գործեսցէ և հնարս հայթայթանաց մարթասցէ, զի թողուլն զ.քաղաքն 'ի պաշարմանէ՝ և անդրէն ընդ կրունկս դառնալ էր անկարելի, և ոչ տալ զհուղ և կամ զռոճիկ խմբից զօրաց իւրոց ոչ էր հնարաւոր ։

Վասն որոյ խորհուրդ արարեալ՝ կոչէ զխաղախորդսն, այսինքն՝ զթաղախսն, որոց հրամայէ՝ զի փոյթ ընդ փոյթ յօրինեալ գործեսցեն զբազում կաշիս սպիտակս ։ Իբրև բերեալ առաջի նորին՝ զսպիտակ կաշիսն, կոչէ զկօշկակարսն՝ և հրամայէ նոցա՝ զի մանրաչափ և բոլորաձև բնաւ մանր հատցեն զկաշիսն 'ի չափ միոյ դրամի ։ Նա տայ և զինել զերկուս երկաթեայ կնիքս, 'ի վերայ միոյ յորոց գրէ զանուն իւր, և զմիւսոյն անուն թագաւորաց, զմինն ամրացոյց 'ի վերայ կածեղ փայտի յորոյ վերայ դնէին զփոքր կաշեայ, իսկ միւսն եդեալ 'ի վերայ փողոյն կռանաւ հարկանէին զկնիքն զայն՝ որ եդեալ կայր 'ի վերայ կաշեայ փողոյն ։ Ուստի տպեալ լինէին ստորին և զվերին կնիքն անստերիւր 'ի վերայ կաշւոյն, և այսպէս տպեցին բազում և անհամար կաշիս, և 'ի սակ արկին փոխանակ լումայի միոյ ։ Իբրև բաժանեալ նզօրս իւր ամ, պատուիրեաց նոցա թէ՝ որքան ատ 'ի անդրձոյս եմք՝ որով գնեսջիք և վաճառեսջիք թարց իւրեք պատճառի, այլ յորժամ երթիցուք յիմ աշխարհն քաղաքն՝ բերեալ տայջիք ինձ զդրամս կաշեայ, և զնոյն սակով առնուցուք յինէն զփողս պղնձեղէնս ։ և այսպէս արարեալ եղև յոյժ առատութիւն 'ի մէջ զօրաց իւրոց, և կացեալ մնացին՝ մինչ որ էառ զքաղաքն քաղաք, և ապա դնացեալ 'ի աշխարհն՝ արար նոյնպէս որպէս և յառաջագոյն կանխաւ պատուիրեալ էր ։

Իսկ 'ի 1077 թուականս մեռաւ, զայ 'ի քիւլանդրոյ Սոկրապետի՝ չանդելեք հարիւր հազար

| Թուին Հայոց | Թուին Քրի |
|---|---|
| | |

զոր հեծելովք 'ի վերայ կարնոյ քաղաքին , որ կանխեաւ Արքայն Ալբաս նուաճեալ էր ընդ ձեռամբ իւրով , որոց եկեալ մարտեան ընդ քերդին' և դարձեալ նուաճեցին զկարին' որէ Արզրում քաղաք ընդ իշխանութեամբ իւրեանց : Բայց ոչ մարտին , այլ արգար բդեշխն քաղաքին ապստամբեցաւ 'ի կայսերէն և ետ ձեռն իւր ընդ արքայի Պարսից Ալբասայ : Ա․ Վ․ 55 Դ․ :

Իսկ 'ի սոյն ամի Ալբաս Արքայն' էր 'ի մազանդարան աշխարհի , 'ի Փահրապատ նորակերտ քաղաքաջն , վասն որոյ ոչ կարացին զօրք պարսից սատանել' և ընկճել զզօրս Յունաց , զի Արքայն ոչ կարաց վերադառնալ զօրավիգ և օգնութիւն զօրաց իւրոց : Իսկ 'ի 1078 թուոջս վերստին հիմնադրեաց Արքայն հիմնադրութիւն մեծ , և յորժամ ոչ դեղք , և ոչ ճարտարութիւնք բժշկաց օգնել իւիչ նմա կարացին , զի ախտ ցաւոյն և՛ս քան զևս յաճեր այր և զօրանայր 'ի վերայ նորայ Վասն որոյ կոչէ զամ կուսակալս' զնախարարս' և զմեծամեծ դրանն Արքունի , և կտակաւ հաստատէ տալ զթագաւորութիւն իւր' զկնի մահուն իւրոյ այսինքն թոռան իւրում , իսկ միոյն 'ի Պարպալատ նախարարաց իւրոց որում անունն էր Իմամդուլի խան , զսա առաքեալ էր 'ի պարսից քաղաքս , որ էր ընդ իշխանութեամբ Յունաց առ 'ի նուաճել զնա ընդ ձեռամբ իւրով . Մինչ առաքէին նա պաշարեալ ունէր զքաղաքն , դրէ Հոհն առ նա հրովարտակ յայժ ճեպով գալ' զի եկեալ դաստիարակեսցէ զորդի որդւոյ իւրոյ' զնորա պսակ թագաւորին : Իսկ ինքն Արքայն լեալ վատառեն և չորս ամաց փողձանեալ դրսէր 'ի կենաց թագաւորեալ ընդ ամենայն ամս 42 :

Իսկ սապա դան յԱսպահան քաղաք' և վեճակեն եդին զանուն թագաւորին եւ վերակն Մէ_

Քի

ֆի, կոչեցին ամենեքեան զանուն նորա Շահ Սէ-ֆի, և մնացեալ քաղաքեան խոնարհեցուցին զգլուխս իւրեանց յերկիր՝ և ասացին 'ի մի բերան ամենեքեան կեցցէ Աբբաս:

| Թուական Հայոց | Թուական Քրի |
| --- | --- |

Սա էր ամաց վեշտասանից յորժամ թագաւորեաց, և էր ճոխ անձամբ, և գեղեցիկ պատկերաւ, և վայելուչ հասակաւ: Արդ՝ ահաւասիկ մինչև ցայս ծայրաքաղ արտահանեալ հաւաքեցի 'ի պատմութեանց Շահ Աբասայ՝ առայց դիտողութեամբ 'ի մէկ լոյս՝ և 'ի պարսից մատենից: Բայց ոչ զբոլորն համայնապատումն գրեցի, այլ 'ի բիւրոց և յանբաւից գործոց նորա՝ զյոյժ հարկաւորն և զկարևորն վասն իմոյ իսկ տենչալւոյ ոյս բազմաջանեալ զեկուցի: Զի ես այժմ ոչ եմ իսկ արդեօք 'ի վիճակի ասելի պատմագրաց. այլ որպէս յառաջագոյն խոստացայ՝ միայն զանուանս, և զԹիւս ժամանակաց նոցա առաւօտին շարագրել: Բայց զի որով հետեւ սիրով քով նախապատրաստեցայ՝ և հարկեալ բանադատեցայ, որոյ վասն և ոչ անօթ համարիմ փոքու ինն աւելորդ ինչ շարախնել 'ի բանի իմում քան զկանխաւ խոստացեալն: Իսկ ըստ որում զհամբաւս նորալուրս զոյնասիկ 'ի քէն սիրեցեալդ լինին, և ընդունիս իսկ արդեօք դու զնոսա ուրեմն և ես հէքս ոչ դանդաղեմ գրել վս անձկալւոյս իմոյ որչափ ինձ մանն՝ զերս նորագիւտս, զորս գտի 'ի մատենից հնագունից վասն վարուց Շահ Աբասայ, առ 'ի որով զյօժարութիւն կամաց քոց 'ի լրումն իսկ ածել: Այսպա գրեցից Թարց անխայելոյ իսկ զանձն իմ 'ի յաշխատութիւնս՝ զոր ինչ գրեն վասն նորա, պարզաբանելով զնոյնն:

Քանզի ասեն Թէ՝ Թագաւորն Աբաս յոյժ սիրէր զպատմութիւնս, զհանճարութիւնս, զկատակս, և զծաղրս. զքննութիւնս հաւատոց՝ և օրինաց, և զխօսակցութիւն 'ի վերայ նոցա:

Իսկ

իսկ 'ի միում աւուր՝ որք ժողովեալ էին ամ մե-
ծամեծք դրանն զուարչե նորա, և խօսէին վասն
ճշմարտութեան հաճառոյ, և ապա խօսիլ սկսան
'ի վերայ բարբառոյ քաղցրութեան և փարթա-
մութեան, և տարակուսեալք հարցանէին առ մի-
մեանս թէ՝ արդեօք որ լեզուն իցէ լեզու և բար-
բառ առաջին, որ տուաւ յԱԾ Ադամայ։ Եւ ո-
րոյ ասացին ոմանք Եբրայեցւոց լեզուն գոլ առա-
ջին, ոմանք քաղդէացւոցն, իսկ ոմանք այս և այն
ազգի բարբառ ասացին, և ապացուցութեամբ
ոչ ոք 'ի յորոց կարաց արտալուծեալ բացայայտել
զտարակուսութիւնն, իսկ Արքայն ոչ հաւանեալ
'ի վերայ անհեթեթ ասացելոց նոցին, վասն որոյ
հրամայէ Լալաբէկ նախարարին իւրոյ և ասէ՝
տես արդեօք թէ՝ որքան ազգ լեզու գտանի յաս-
պահան քաղաքիս։ Իբր յամ ազգաց՝ որք գոն իսկ
ահաւասիկ արդ բնակեալք 'ի քաղաքիս, ժողովեա
դու 'ի յորոց զմանկունս ընտրեալս՝ որք տակաւին
արձակեալք չիցեն զլեզուս իւրեանց 'ի խօսս հայրե-
նականն։ Իբր պահեսցես զնոսա ամփոփեալ 'ի տան
միում, որ իցէ բացագոյն 'ի շինէ և 'ի ժողովրդենէ
զի ամենևին մի լսել կարիցեն զբարբառ՝ և ըզ
խօսս մարդկան։ Եւ ներքինիս երկու կացո 'ի վե-
րայ նոցա՝ զի յորժամ ոք 'ի նոցանէ լացցի, փու-
թանակի ազդ առնիցեն մարց նոցա՝ որք եկեալ
լուեսցեն և թագ խօսելոյ ինչ դիեցուսցեն զնո
և ապա արձակեալք գնասցեն յայլում տան բնա-
կեսցեն, և զծախս նոցա յարքունուստ լիցի. և
ապա տեսցուք իսկ արդեօք՝ թէ զինչ բարբառ
այնուքիկ մանկունք 'ի տան անդր արձակեսցեն, իսկ
և իսկ ամենեքեանս աներկբայ հաւատասցուք այն
գոլ առաջին լեզուն՝ որ ետ ԱԾ նախնոյն Ադա-
մայ։ Իսկ Լալայէկ իշխանն թարգ իրեք սպուժելոյ
ալքար զամ, հրամանս թագաւորին՝ որպէս հրամայ-
եցաւ

| Թուէին Հայոց | Թուէին Քրի |
| --- | --- |

| Թուին Հայոց | Թուին Քն |
|---|---|

եցաւ նմա յարքայէ. Իսկ ժողովեալ մանկունս երն ՚ի յայսց ազգաց, այսինքն՝ ՚ի Հայ, ՚ի Յոյն, ՚ի Լատին, յԱսորի, ՚ի Վիր, յԱղուան, ՚ի Տաճիկ, ՚ի Պարսիկ, ՚ի գեաւռ, ՚ի Մար, ՚ի Լոռ, ՚ի Լէկզի, յեօզբէկ, ՚ի Գիլաք, ՚ի Ջհուտ, ՚ի Հնդիկ, և ՚ի Յաբաշ, և յայլոց ազգաց ևս՝ որք գտան ՚ի յասպահան քաղաքին ժողովեաց զնոսա և տարեալ արու և էգ ելից ՚ի տունն, և եթէ ոք ՚ի յորոց դէպ լինէր մեռանել, փոխանակ այնր մանկանց, զայլս բերէին ՚ի տեղի նորա: Իւր իբրև մերձեցաւ ժամանակ արձակման լեզուի նոցա, բացին զբերանս իւրեանց՝ և խօսէին խեցբեկագոյն և կործաբար զբարբառ խժական, որ ոչ մի ՚ի յորոց երեւէր երբէք զբուն խօսս հայրենական ազգի իւրեանց, և մարդիկ եկեալ անմռունչ ունկնդնէին և լսէին զխօսս նոցա, և ոչ իմանային. Իւր ելքեանք ընդ միմեանս՝ կռուէին, ծիծաղէին, խաղային, և լային, և յորժամ մարք նոցա մտանէին առ նոսա, խնծապեալք ընթանային և գային առ մարքն իւրեանց մրմնջեալք ողջէին: Իսկ յաւուր միում գայ Արքայն Աբբաս և մտանէ առ նոսա, և իբրև լսէ զխնդալթ իւր և զխժական խօսս նոցա՝ հրամայէ տարածել չամիչս առաջի որոց, իսկ նոքա կռնչալով և կառաչելով արձակեցան ՚ի վերայ չամչիցն՝ և ուտէին, և ոչ ոք իսկ գիտաց եթէ զինչ արդեօք լեզու նոցա խօսէին: Ապա որոյ հրամայեաց Շահն առ ժամայն կոտորել զմանկունս զամ, զի մի (ասէ) արմատացեալ աճեսցի զբարբառդ այդ, իսկ յառաջադէմ իշխանն Լալաբէկ մատուցեալ ընդ յառաջ Արքային՝ ոչ եթող սրախողխող մահուամբ կոտորել զանմեղ մանկունս, այլ ասէ զնասցէ իւրաքանչիւրոք առ մայր իւր, և ուսցի զբարբառ ազգին իւրոյ: Ընկալաւ Արքայն զբանից նորա, արար նոյնպէս՝ որպէս նա

խօ

| | | |
|---|---|---|
| խաւարեցաւ որոյ գնացեալ առ ծնօղսն իւրեանց՝ փութով ուսան վաղվաղակի զՀայերէնական բար- բառն ։ Իսկ սա այն Լամբրոնեցին՝ զոր մեծ լեզուն պատմէ Առաքել վարդապետն 'ի պատմութեան իւրում ։ 15 գլուխ ։ | Թուին Հայոց | Թուին Քն |

Արդ՝ 'ի խոռնացման մտաց իմոց՝ թողի զայսոսիկ վերս հարկաւորս, և ոչ 'ի կարգի անդ ծա- նուցանել եղէ ձեռնահաս, վասն որոյ կամ եղև ինձ աստէն գրել զայնս մնացեալս՝ որով իրաւ- ամբ հասու լիցիս՝ [illegible] Հայոցն ։

Քանզի սա էարկ 'ի վերայ Նորին սրբազան Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի հարիւր թումանս հարկս որ ամ ըստ ամէ անվրէպ առնուին զայն , որով և կարի իսկ թշուառացաւ զորք և երկնանման ծնօղ մայրն մեր Էջմիածին ։

Իսկ 'ի 1063 թուոջս ետ քերել զքա- րինս Տէր Էջմիածնի , զորմէ գրեթէ՝ յայծ ճոխա- գոյն պատմէ Առաքել Վարդապետն 17 Գլուխ անդ զայես ։

Իսկ 'ի 1078 թուոջ մերում մեռանի Արքայն Աբաս 'ի Ֆահրապատ , որոյ կացեալ թա- գաւոր քառասնդեակ ամս՝ ։

| | | | |
|---|---|---|---|
| Իսկ սա յաջորդէ զտեղի նորա , և ժա- ռանգէ զպերճապատիւ իշխանութիւն Շահ Սէֆի Թոռն նորա ։ Իսկ 'ի յաւուրս ժամանակաց սորա՝ գայ Սուլտան Մուրատ կայսրն Օսմանցւոց եօթն հարիւր հազար արամբք 'ի յարարատ գաւառ՝ 'ի վերայ Երևան քաղաքի ։ Իսկ պաշարեալ զքաղաքն կաւուրս ինն՝ անպարտելի զօրութեամբ առնու զերևան 'ի ձեռաց պարսից 'ի 1048 թուոջս ։ Նա որոյ 'ի 1085 թուականիս մերոյ՝ ելանէ Արքայն Շահ Սէֆի 'ի քաղաքէս , հանդերձ հարիւր հա- զար արամբք , և չուեալ ժամանէ յերևան քա- ղաք ։ պաշարեալ կալաւ զքաղաքն երեք ամսեայ | ՇԻԸ | ՌՀԹ | 42 |

ժա

| | Թուին Հայոց | Թուին Քն |
|---|---|---|
| ժամանակաւ առնու 'ի յօսմանցւոց զքաղաքն Երևան և զառնայ անտի արքայն գայ 'ի սպահան ։ Իսկ 'ի 1087 թուականին մերոյ՝ Սուլտան Մուրատ Կայսրն Օսմանցւոց դնոյ 'ի վերայ Բաբիլոն քա-ղաքի 'ի պատերազմ ընդ դէմ պարսից, և յաւ-ուրս երեսուն և վեց մարտեաւ ընդ ամրոցին Բա-բիլոնի, և էառ զնա 'ի ձեռաց պարսից մեծաւ զօրութեամբ, և հզօր կարողութեամբ ։ Ուրա-նօր զբազումս 'ի յազգէն պարսից սրախողող մահ-ուամբ կոտորեաց, և բնաջինջ արար այնու լը-ցեալ զցանկութիւն սրտի իւրոյ ։ Իսկ ապա Շահ Սէֆի Ա. արքայն պարսից, և Սուլտան Մուրատ Կայսրն Օսմանցւոց զդաշինս հաշտութեան պայմա-նեալ հաստատեցին 'ի մէջ երկուց ազգացն, զի մի այլ ևս յաւելցին 'ի վերայ միմեանց ելանել պատերազմաւ, այլ առնել զսէր և զխաղաղութի-ն ընդ միմեանս, և տիրել իւրաքանչիւրոք իւրում բաժնի և վիճակի ։ Իսկ 'ի 1079 թուականին մերոյ գայ Տէր Մովսէս Վեհափառ կաթողիկոսն 'ի սպահան քաղաք 'ի դուռն Շահ Սէֆի Առաջնոյ, ուր զբազում օժիտս ծախեալ 'ի դրան Արքունի յորմէ աղերսիւ հայցեալ եբարձ զհարկեր թա-ման հարկն 'ի յԱթոռոյն Էջմիածնի, յայնմ օրէ մինչև ցայժմ եղև գերահռչակ ՍԲ Աթոռն ազատ 'ի յարքունական յարկաց ։ | 1087 | |

Իսկ 'ի 1087 թուականի մերում Տէր Փիլիպ-պոս Աղբաւէր կաթողիկոսն եկեալ իդուռն Շահ Սէֆի Առաջնոյ յԱսպահան քաղաք, յորմէ խնդ-րել զՁեռն Սրբոյն Գրիգորի բազմաչարչար Հօրն մերոյ՝ և լուսաւորչի ազգաց մերոց, որ ընդ քարանց Սրբոյ Էջմիածնի բերին յԱսպահան՝ հրամանաւ Շահ Աբասայ առաջնոյ խարամանկ Արքայի ։ Զոր մե-ծաւ փափագանօք յորմէ հայցեալ, եգիտ և էհան ըզձեռեղն իւրոյ նորին հրամանաւ բարձեալ զՍՁ

նո

Նորայ Հնորհատուածն՝ ՚ի նորին ծննդեան՝ ընդ իւր Թուին Թուին
վերստին տարաւ ՚ի Սբ մայրաքաղաքն մայր մեր Էջ_ Հայոց Քի
միածին, որ ՚ի փառաբանութեան քաղաք՝ ՚ի յարգարան
գանձատան մեծին Հայոց ։ Իսկ ընդ ժամանակս ընդ
այնորիկ էր Աստուածորդի մեծի և գերահռչակ ա_
թոռոյ նորա Ջուղայիս, որ ՚ի յաղթական քաղաք
էր Խաչատուր Երուսաղեմայ Վարդապետն, ըստ
որում զօրէ կարի ճարտարապետ ճառեցաք ։ Իսկ որ_
քայն Հոռ Սեթի թարգմանչական վարժապետ կեն_
ցաղոյս՝ կանխեալ օր հասին մեռանի ՚ի Քաղաքն
քաղաքս, որէ ՚ի գաւառին Սպահանայ՝ մերձ ՚ի
Ջուղ քաղաքի ։ Որ և սա թագաւորեալ ՚ի կա
ցուն Պարսից և ամ Երեւան ընդ ամենայն, ամն՝ ՌՅ
Յետ որոյ երկրորդ Հանաբաց որդի Ալ ՌՕՀԱ ՌԶԻԵ
սեպհական զաթոռ թագաւորութեան, որ էր
յայժ Քրիստոնեայ՝ և կարի աղօթարար ։ Իսկ զայ_
սու ժամանակաւ հնդկաց Աբբայն Հակիջան սուա_
քէ զգօրս բազում՝ և անհամար ՚ի վերայ Դան_
դահար քաղաքի, որոց հասեալ ՚ի սահմանս նորա
պաշարեն զբերդն ցամս և կէս, և իբրև քան
ճալար անձինք ՚ի զօրաց հնդկաց սպանին ՚ի պարսից
և ապա դարձան յետս անօթութ, ՚ի ՌՃՕԱ. թուոյս
Իսկ ՚ի չորրորդ ամի թագաւորութեան սորա ՚ի
մարտնական կենդանոյս լանի գերահռչակ Հայոց մեր
Խաչատուր Աշտամերձ Վարդապետն. և յաջորդէ
զԱթոռ Աստուածորդութեան զՏէր Դաւիթ
Հանճարաւոր և մայրաքաղաքի Վարդապետն ։
Բայց զոր ՚ի յանձին՝ որք դրեալ էին
թէ զինի Տեառն Խաչատրոյ, նաև յաթոռ Ջու_
ղայի Տէր Յովանէ Հրեշտակական Վարդապետն,
որ յետոյ գնաց ՚ի Սբ Աթոռն Էջմիածին՝ ուսա_
նօր եղև կաթողիկոս ամենայն Հայոց, և ապա
զկնի որոյ եղև Աստուածորդ և Արեւմտայան ՚ի նոր
Ջուղայ՝ Տէր Դաւիթ Հադրի ընկալ Վարդապետն

գրե

| | Թուին Հայոց | Թուին Քի |
|---|---|---|

գրեթէ՝ ծաղկեցաւ յաղթն երկրաւք 'ի վերայ Արքայ
Յարկիս մերոյ, և յաւէտ քան զնա բարգաւաճեալ
երկոյ ցուցց զՍուրբ և Նշանաւոր Տաճար զանազան և
երփներանգ վայելչութեամբ ։ Զի անդ սա՝ հրամանեալ
յԱծ, և երկիցս երեւեալ Քր ոչանաւրինական Սուրբ
Լուսաւորչին Հայր շառաւիղին Ս. Արդարական ընկալեալ
հրաման յայլքում 'ի Հռոմայ յերկրորդէ
արքայէ՝ առ 'ի շինել մեծամեծս՝ և յոյժ վայե-
լուչ վանքս միանձանց՝ և մեղէն եղբարց կրօնա-
ւորաց՝ և ամենայնէս վարդապետաց ի բնակութի
Որոյ ընկալեալ զհրամանն՝ յԱրքայէ՝ հիմնէ արկ
կառուցանել զայդ ինստարան՝ և զիրկնանման Տա-
ճար Սրբոյ Բէթղեհեմա, հանգոյն Սողոմոնեան Երու-
սաղէմ և մեծահռչակ Տաճարին՝ որ յոյժ վայել-
չապէս անգամ սրբեցաւ 'ի յերուսաղէմ պաշտօնէից
քաղաքի ։ Իսկ ահաւասիկ 'ի հազարորդի, հարիւր-
որդի, և չորրորդի թուականս Լուսաւորչեան հիմնար-
կեցաւ զվայելչութեան Տան Տեառն ԱԾ մերոյ
'ի յաշխարհս Պարսից 'ի Սպահան քաղաքի, և 'ի
յաւանս Նորոյ Ջուղայի ։ Իսկ կանգնեալ 'ի լու-
էհաս կատարման զՍուրբ սորին մայր մեր 'ի հազար-
որդի, հարիւրորդի, և երկու տասն երրորդի
թուականս մերում, որ գրեթէ՝ է յիսուն ամի յամ-
բակ էառ զգործն և կառուցեցաւ՝ յոյժ գեղեցիկ
և ամենաշքնաղ յօրինուածովք, և ոսկեծածուկ՝ և
երփներանգ ոսկւոյ լինի բաւական մինչորդ ան-
ւթեամբ գեղազարդեալ ։ Ըստ որ՝ գեղեցկա-
նկար և փառաւորեալ խորհրդական պատկերօք (ըղ-
հայն 'ի նորս ածանցաբար բաղդատելով) ծածկէ
'ի ծագ, և համատիրեալ զարմանալին և հրաշալա-
կերտ գեղզեղեալ ։ Սոր ոչ իմիք երբէք ընդ հան-
'ի գեղեցկութեանց ։ այլ ամենայնի լցեալ և ա-
ղծեալ ամենապատիւ և բոլորովի. վայելչագոյն
եղեցկութեամբ, որ և 'ի հաւաս հանապազ խորա-
տա

| Թուին Քր. Հայոց | Թուին ՔԻ. |
|---|---|

տաւլոյն Թագաւորաց երևեցաւ՝ և եղև միշտ զար մանալի, և զարհուրելի, որպէս և յայտնի յամե նեցուն տեսողաց իսկէ արդեօք: իսկ բարձրութիւն պատուանդանի յարկի փառացն այ՝ ունի բովանդակ կանգունս՝ երկայնութեան, նոյն չափ և լայնութիւն իսկ երկայնութիւն իւրէ՝ քսան և երեք կանգուն, և բարձրութիւն գմբեթին՝ և կամարադեղ կա_ թուղիկէ ինէ՝ կանգուն երկայնութեան, և շրջապատ բոլորակութեան գմբեթին, ունի կանգունս՝

Իսկ այսպէս հրաշալի և վայելչափառ յօ_ րինուածով կատարեցին զՍուրբ Տուն Տեառն այ մերոյ, և արարին նաւակատիս խրախութեամբ ե_ կեղեցւոյ Ը.Ծ մերոյ: Այլ արդ՝ և վասն գեղեց_ կազարդ և հրաշակերտ յօրինուածոյն՝ զոր նոյն կերտեաց և յօրինեաց յաղթանակ քաղաքը 'ի ներ Տան Տեառն, և 'ի Սրահի նորա. զոր յայտ_ ցանեաց ինձ հնգոյս և թշուառիս՝ ոչէ կամ ու_ րոյն ուրոյն տառտակին մատենագրել, այլ յայտնի և քայերական գոլոյն նոցա համակ տեսողաց: Այլ միայն այսչափ ինչ վասն այնոցիկ գրեցի՝ որոց ոչէ յայտնի, և ոչ իսկ հեզգացեալ պիտի հասանօտիք վայսուոիկ, զի մի գուշէ արդեօք 'ի ձեռս հեղգու_ թեան զանխուլ և թագթաքուր իսկ մնայցէ 'ի կա_ ղապար թագաստեան Ամենաբազ և երկնից երկնուոյ Հրաշափառագոյն հորս մերոյ քարեփառութեան երկիր և տաժանակրութիւնք: Քանզի մեծ յիշ ան_ մտութիւն առն մարդոյ, և առաւել իսկ յանդէտ և 'ի դեռևս ծաղկեալ զժամանակ, եթէ ոք 'ի վի_ իրաց յայտնագունից լիցի արդեօք յանձանբան: Վասն որոյ առ 'ի ոչ անդէտ և ունայն ծախել ըզ ժամ և զնիւթ ժամանակս կենաց իմոց՝ զոր ինձ 'ի յԱդամեան Տեառն էն պարգևեցելէ, որոյ հա_ մարն ևս զառ 'ի յինէն պահանջելոց իւրէ Սրբա_ նովք և ամենատեսք քերականն, ուրեմն զառ

յայն

| Թուին Հայոց | Թուին ՔՆ |
| --- | --- |
| | |

յաշխարհաց երկրորդումն և լայնատարածակ ծաւալ իւր
ոչ գտանի ։ Նայ ՚ի միում նորաշխարհին տեսողաց՝ և
լսողաց զարմանս՝ զայս իսկ ծանուցեալն թագին յան-
ձին, որք և յորոց յոյժ պատշաճաւոր և ճահոդա-
պէս պարտաւորին տեսողին, և լսողին՝ առ ՚ի նոր ը-
թողն և չքմեղ լինի զառ պաշտօնեայն կերպին, և
զշնորհակալութեան մասն նոր հաստատեալ հան-
դերձ գոհունակութեամբ՝ և մեծարել՝ և յար-
գել զնա ըստ արժանեաց վայելուչ փառաց նորա ։
Բայց թողեալ իմ պայմանիկ ՚ի յօն անդր՝
այժմ առաջին զասկան ինչ զամ ՚ի վերայ Հայրա-
պետ եղանելոց, որովք յոյժ ձախողեալ զեկեղե-
ցին ՔՆ ՏՆԾ Տերոյ, զորս եդի ՚ի մտի համառօ-
տիւ արձանագրել ։ Իսկ թէպէտ ՚ի յԱծուստ փա-
ռաւորեցեալն ոչ կորստի իւիք մարմնաւորի փա-
ռաց և զօրութեանց, որպէս որք արդար և պա-
՚ի յոյս եղեն նոքա փառաւորեցեալ. և ՚ի նորա
փեցաջոյ յորմէ անդյոց և ՚ի հրեշտակական պա-
րաց շնորհաւէտ փառաւորեցեալք, ըստ որում
և զորս գերահրաշակ իմէ հանդիսից ազգաց ։ Սա-
կայն և այն փառք ոչ արեամբ իմանել, եթէ ըստ
արժանաւորութեան առաջ՝ վեր ընծայեալ ծո-
նեալ ։ Նա և՝ այժմ զոր ինչ փառաւորութիւն
և զօրութիւն, որ առ յինէն ընծայի առ մեզ հա-
ւատալ պատուակալութեան նոցա, է իբրև
պզտիկ՝ ըստ համեմատութեան Աստուածութեան նոցա փա-
ռաւոր և պարգևաց ամենայն նոցա ։
Քանզի զօրութիւն նոցա ոչ ՚ի մէնջ կշ-
ռին, և ոչ մանկանգուած թերանայք զրուատեալ
նոր բռնողին, այլ ՚ի յոյս, և ՚ի յանծայնոյն մեծարեալ
յարգին, ըստ այնմ թէ՝ փառք և զօրութիւն ար-
ժանոց՝ ոչ ՚ի մարդկանէ, այլ յԱՅ զօրացուցանո-
ղին զնա, և այլն ։
Արդ՝ թէպէտ յոգնս սրբազնայից, և յթա-
Համբի

Հարցի մատենից պիտոյանացին՝ մինչ առ ՚ի եղե- | Թուին Հայոց | Թուին ՔԻ.
րել, և յանքով կ հրաշափառապանձ գովութիւնս,
և զհամայն բարեվայելուչ և զնաշխարհիկ արուե-
գործս Հարցօ իմոյ ընձուլեայց՝ և Տեարցս ընդ
սահմանաւ դոյն քարտիսի պարուրեալ ստորա-
գել ։ Արդ սակայն. ասացից զբանս գովութեան
նոցա խուն ինն և նիւաւ բանիւք, որքան արդ եօք
առակեալ զօրեսցէ իսկ զեղձ աշխոյժ տենչմանցս
իմոց ։ Իսկ արդ՝ զի եթէ գովելիք եղեն ալք ,,
մանք ՚ի հնումն, և ՚ի նորումս՝ վասն ազնուականն
և բարեփառագոյն գործոց իւրեանց, զոր օրինակ
Մովսէս նախկին հրաշատես մարգարէն՝ զառ ՚ի
ապստամբելոյ ժողովուրդս Աբրահամեան՝ ՚ի յեգիպ-
տացւոց դժոխագոյն ծառայութենէ ։ Իսկ Սամու-
էլ զառ ՚ի արտասանաբար աղօթելոյն առ տէր աձ
վասն քաւութեան մեղաց ժողովրդեանն, և յա-
ղագս ազատութեան իսրայէլի ՚ի ձեռաց զժնդագոյն
անօրինաց ։ Իսկ Եղիայ սոսկ յանդիմանելոյ զեղեռ-
նագործ Աքաբայն արքայութ, և ժանտ կին նորա հե-
զուբէլ ։ Իսկ ՚ի նորումս ընձայլեք եղեն երջանկա-
փառագոյն Հայրապետքն, սոսկ առ դնելոյ զանձինս
իւրեանց ՚ի վերայ հօտին ՔԻ, և զայլս բազումս
այսպիսիս ։ Այս ընդէր ուրեմն ոչ են գովելիք,
և քաղցրագոյն բանիւք դրուատելիք յուքիկ
բազմաշխատք և երանելիք Հարք մեր՝ զՏէր Խա-
չատուր՝ և զՏէր Դաւիթ վեհմագոյն Վարդա-
պետն սաեմ, որք ծնան զմեզ կաթամբ հոգեւորա-
կան կրկնակի կրօնաւորանօք, որք և համագոյն նախա-
մարգարէին Մովսէսի յորժամ հայթայթեին
հնարից մարթէին, առ ՚ի ազատել զփոքրիկ հօտս
ՔԻ ՚ի յեգիպտաստարան ծառայութենէ Փարաւոնից ։
Իսկ իբրև զՄարգարէն Սամուէլ արտասուաթոր
երկրպագուօք հայցէին զՏէառնէ վասն քաւութե-
մեղաց ժողովրդեաննայ, և վասն հաստատութե՝

և

| | Թուին Հայոց | Թուին Քի |
|---|---|---|

և անսայթաքութեան նորայս իսրայէլին ։ Իբրև ող զՄարգարէն եղեալ՝ յանդիմանէին և կշտամբէին զչարագործս, և ընդդիմանային ոճրագործաց, մինչև զամենեսեան իսկ մեղուծարան, և խստագոյն քանիւք ածէին 'ի յուղղութիւն ; Իբրև համատարաս երջանիկ Հայրապետացն առաջնոյ դնէին զանձինս իւրեանց 'ի վերայ փոքու հօտին Քի, ապաւէնլով զնոսա 'ի զանազան և 'ի բիւր ազգի փորձանաց, և 'ի տաժանավիշտ տառապանութեանց ։ Իբրև վերջապէս Թորգ իմիք երկարութեան առաջեալ՝ ընդ ծմերջանկացելոց, երջանիկ և բարեբաստիկ երևեցան որպէս զի զամենեսեան շահեսցեն, և ընդ ամենեքումք ընկալցեն զգովս չքնաղագոյն դրուատանաց Քանզի ըստ բանի իմաստնոյն՝ 'ի պտղոյ արդարութեան ծառ կենաց, զոր արդարև 'ի պտղոց բանից շրթանց նոցա ընկալաք զծառ կենաց, այսինքն՝ զՅովհաննէս երանելի՝ և շնորհածորան Մարգապետն, որ համարձակ խօսէր զվկայութիւն Քի Այ մերոյ՝ առաջի թագաւորաց և իշխանաց, և քննական բանականութեամբ, և գրով վկայութք հաստատէր զանօրինութիւն մարդեղութեան բանին Այ, և մեղանչելոց կակղացուցանէր զկարծրացեալ սիրտ նոցա՝ որ ընդ դէմ քրիստոնէից, որով գրեթէ՝ մեք համայնքս մինչև ցայժմ զկեցութիւն հաւատոյ վերստացաք ։ Որպէս և զորոց բարեբարոյ և ամենավայելուչ գործոյն յառաջ զնալով պարտ և արժան է մեզ կարճ 'ի կարճոյ արտածաւել ։

Այլ և սոքա եղեն Աղ, և լոյս տիեզերաց աշխարհի, ըստ բարբառոյ փրկչին մերոյ Յի որ վերաձայնեաց հետևողաց իւրոց առաքելոց, և նոյին աշակերտելոց և յաջորդաց ասելով թէ՝ դուք էք աղ երկրի, և դուք էք լոյս աշխարհի ։ Որք և նոքա եղեն մաքրողական աղ համեմիչ ընդհանրա-

ծա

| Թուին Հայոց | Թուին ՔՐ |
| --- | --- |

ծառայ տիեզերաց, և եղեն լոյս արփիափայլ
լուսաւորիչք ազգի մարդկանս բոլորից: Այսպէս
ահա ուրեմն և նոքա ահաւոր և զարմանաքանչ
հարք մեր ի տապաքն լուծեալք, իւրեանց խոհականա-
գոյն զգօնութեամբն՝ և հանճարեղ անկայութն
իբրև ազնիւ ամպք ցուցեալ՝ տրամադրեցին զմխ-
ճեր և զանազան փորձ մեր, իւրեանց դեղապա-
շտ վարուքն՝ ազնուական ներգործութեամբ ըզ-
մեզ բարեյարմար վայել չացուցին, և յոյժ ճահո-
ղակէս զմեզ արարին փափագելի և անուշելի: Իւ-
րեանց շնորհապատար և վեհամփոփ գոյն շարժո-
ղութեամբն՝ եղեն առ հանդիպչք զմեր ազգամիջել
և խաղաղական վարուցն և ընթացից: Քանզի սո-
քօք, և 'ի ձեռն սոցին՝ մեք ամենեքեանք իսկ սովո-
ցաք զվարս պարկեշտս՝ և զգօնս: Նոյն և իսկ
սոքա եղեն լոյս ծառայութ առձակ անհամեմատ ի-
մաստութեամբն իւրեանց, որով մեք խառնա-
րեալքս յորդառատ անմտութեամբ և մոլորութ-
բազմաշրջիկ վերնականաւ մոլորութեամբ, յղփա-
ցեալ և պերճացեալ ճառագայթեցաք: Թէ և
այժմ մեք մեղէն 'ի բաց թօթեալ՝ լքեալ՝ հալա-
ծեցեալ՝ մերժեցաք զպարգևեալ լոյս ծիրանաւ խ-
նորհաց նոցա, և իբրև զկոյր որք խարխափին օք
զձեռս մեր տարածեալ առ և անդ կարկառե-
լով, զորմեն լաւալ յածեալ շօշիմք 'ի խաւարի
անգիտութեան: Իսկ արդ՝ զի եթէ 'ի ձեռն սո-
ցա այսքանեաց և առաւել յաւէտ քան յայսմ
նեաց եղաք մեք բարեաց ժառանգորդք, ուրեմն մի
ոք արդեօք պանծացի բանիւ բերանոյ, և խոն-
հին ափերիւ զհամայն պալութենն հրաշապանծ
Հարցս մերոց բովանդակ ակել ալ: Քանզի ամենևին ան-
մարթ է ինձ և անկարելի, զի յայսմ 'ի դոյն սո-
փերի՝ զմեծարարութիւն արիադոյն և բարեգոր-
ծեղ գործոց նոցա պատմել: Զի ըստ տէրու-
նա

| | Թուին Հայոց | Թուին Քն |
|---|---|---|
| նախկին բարբառոյ ձայնին՝ Արքա եղեն Ճրագ ար-<br>փիածածանչ՝ ծագեալք 'ի վերայ աշխարհակի նորայս<br>արձանի եկեղեցւոյ՝ որովք բնաւ հաւատացեալք<br>լուսաւորեալ, և այժմ, որոց մեք պաշտօնեայքս եկեղե-<br>ցւոյ անտի զլոյս կենաց, և զանձաւ բարիս<br>վայելեցին, և վայելեմք միշտ ։ Իսկ մանաւանդ ա-<br>պէս զբարեպաշտութ և զհրաշափառ Հայրն մեր Տէր<br>Դաւիթ բարեմտութեամբ աւանել. քան զնա, և կամ<br>համեստ նմին, և ոչ ընդ հասա յարմ՝ իւրով ան-<br>հնարէ արդիւնաւորութեամբն՝ բազմօք և զանազան բարեաց<br>եղև առիթ և պատճառ 'ի յարկի հան Տեառն Ած<br>մերոյ ։ Իբր իմաստասիրեալ խոհականութեամբն իւ-<br>րով, չնաշխ որդիկ վայելչութեամբ՝ և չափազա-<br>ցոյն առաքինութեամբ ներթևեթեալ զարդարեց<br>և պճնազարդ փառօք ճոխացոյց զհամայն խումբս<br>Յանոյն հօտորելոց, մանաւանդ դատաւորական<br>մարդկաց և ուսոյց զբարւոք գումարս աշակերտաց<br>համբակաձայնից գրովք Աստուածոյ, և արտաքին<br>արհեստիւք ։ Որք եղեն արք երևելիք և գերա-<br>հռչակք, և անվանելի Աւագիանք ընդ դէմ պար-<br>սից, ընդ դէմ (երկաբնակ) հերձուածողաց, որք<br>և 'ի բազմաց աշակերտաց նորա, ես ատենօր 'ի<br>յորոց զսակաւն գրեալ ծանուցից, առ 'ի որովք<br>գալ 'ի ճանաչումն երջանիկ Հօր մերոյ բարեփա-<br>ռութեան ։<br>Բայց նախ զայս կարեւոր համարիմ գրել՝<br>զոր յառաջ 'ի ծառս նորոյ ոչ գրեցի . քանզի<br>Տէր Խաչատուր Հոգեւկիր Վարդապետն՝ մի ինչ<br>գերազոյն գործոց՝ ոչ եթէ միայն քան զնա,<br>այլ և քան զհամայն նախնիս մեր ։<br>Վասն զի սա չհանդուրժեաց մինչև 'ի<br>գալ Յովհաննու Վարդապետին 'ի յԻտալիոյ, այլ<br>ինքնին շնորհիւ Տեառն՝ յօրինեաց զգործարան<br>Տպագրութեան, որով տպեաց իսկ զՎարս Հարանց | | |

'ի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР

'ի 1090 թուոջս, և 'ի ժամանակս Հաճ Ռէֆի աղայի ։ 'Ի չէրչէ֊բահչէսինտէն Հարանց Հարանց ...

Այլ իբրև են 'ի յիշատակս Յովհաննէս վարդապետին՝ (որպէս զրեմ 'ի վեր անդր լի֊ ալիր ճառեցի,) զբերեալ գործարան սորա լա֊ ւագոյնէր՝ քան զնորուն յօրինեալն ։

| Թուին Հայոց | Թուին Ք.Ի |
| --- | --- |

Այսքանս բաւական համարեցաք վասն ներկայ աղդա֊ բարիս ընթերցողացն, և ըստ խոստմանն մե֊ րում զՊատմութիւն մինչ ցուցարտ տպելոց եմք 'ի հետևեալ Ազդարարն ։

---

Հետևեալ Պատմութիւն Հէէգտարալէ խանէ, Աւրարեցէլոյ 'ի Պերուն Յո... Սենոնէանէ, Սնուելոյ Աղամ անուն Աչգարարի, ... 'ի 253 էջն Հայոց անուն Աչգարարէ ։

Ը անսոր փաթթի Հէկեդարն առնէր զոր ինչ իմիք անյս յա֊ ծոյ լինէր, և նախարարքն քաղաքին սկսան չարախօ֊ սութիւն առնել, քանզի յոյժ եւ ըկնչէին 'ի քաջութենէ սորայ, և տեսեալ սա զի ամենեքեան չարախօսին յիւրենէ, գաղտ սկսաւ բարեկամութիւն առնել ընդ հեռ եկայքսին Պի֊ րիճան կոչէին, դրաւեաց զսիրտ զիւանիս այս, և զայս սա֊ քեաց Սոլխտամալն խանն երէք հազար զօրք սրէր հօրեղբօր որդի ամուսնոյն իւր 'ի փոխնորդի չէրի, և գրեաց թուղթ ... և բարեկամութեան առ իշխանն Փրանկստան ... թղթոյն թէ կամիմ միաբանութեամբ բարեկամ լինել ընդ ձեզ հանապազ տամ ձեզ զօրս իմ յօգնութիւն ծառայութեան իմով, և նո֊

Նոքա իսկոյն հաճեցան, քանզի ագահութենէ իւրեանց կարծէին
թէ՝ 'ի դիպող ժամու կողոպտել կարէին զհարստութիս երկրի
նորայ տուաքեցին պատասխանի թղթոյն և ավդարարին նմա թէ
են բարեկամք նորա մշտնջենաւոր, և Մախտումղուլիխանն մնաց 'ի
մէջ փունթիշէրու և յորժամ ընկալաւ պատասխանիս յոյժ ու-
րախ եղև քանզի դիտաւորութիւն սորայ էր այլ իմն թնդա-
նօթս և հրացանս, սակաւ գդանէին անդ զի հարկաւորիւր յոյժ,
և սկսաւ ժողովել զօրս և տայր կրթութիւն կիրս զինուորականս
մինչև Ըռաճայն կասկած առնէր ընմանէ զի տեսանէր թէ դիտա-
ւորութիւն սորա են բոլորովին չար վասն որոյ հրամայեաց թո-
ղուլ զբոլոր զօրս 'ի մէջ քաղաքին ինքն իւրանովքն բնակիլ
արտաքոյ քաղաքին, և քաղաքս այս էր կղզի մի 'ի մէջ գետոյ մի-
ոյ (որոյ մեք անուանեմք գետ կօլօրամայ, նոքա զինչ անուանեն
ոչ գիտեմ) և գետս այս գայր ուղղանելով 'ի յարևմտեան կող-
մանէ մերձ քաղաքիս բաժանիւր երկուս երթայր շուրջ զքա-
ղաքաւն և միաւորէր 'ի կողմն արևմտից 'ի մի երթայր իջանէր 'ի
ծովն մերձ կոլօրամ ընդ այսու մեք անուանեմք գետ կօլօրամայ,
և երկայնութիւն կղզոյն էր վեց մղոնաչափ, և լայնութիւնն էր
երեք մղոնաչափ, և էր յոյժ ամուր և ունէր կամուրջս քարեա
որ էր և մուտս առնէին միոյ ճանապարհաւ քանզի ոչ գոյր այլ
ճանապարհ, և տարոյն անդամ մի ուռուցեալ գայր խխտա-
րուգ ընթացմամբ այսպէս ամիս մի կամ երկու երբեմն երիս և
ապա իջանէր, և սա անճարացեալ առեալ զամենայն ընտանի-
անս իւրայնովքն հանդերձ ելեալ 'ի քաղաքէն և բնակեցաւ 'ի մի-
ջի նոյն կղզւոյն արտաքոյ քաղաքին 'ի նեղեգոյ վրանի որպէս հրա-
մայեալն էր նմա և տայրն բռնաբիկս որպէս յառաջն, և անդ մնաց
իբրև ամիս հինգ մինչև մերձեցաւ ժամանակ անձրևելոյ, սկսաւ
անձրև գալ և լնուլ զգետն յայնժամ խորհուրդ արարին նա-
խարարքն քաղաքին թէ՝ հանկարծ անկանիցեն իվերայ նորա և
կորզեն Մահմադալեանն իւրեանց կամ սպանցեն, բայց սա ունէր
մտերիմ 'ի մէջ քաղաքին իւրոյն զգուշացուցին նմա թէ՝ կամին
ըմբռնել զքեզ, և յորժամ ընկալաւ լուր այս մնաց 'ի տարա-
կուսի խորհէր թէ զինչ հնարս հնարեսցէ զի փրկեսցէ զկեանս
իւր ոչ ունելով ժամանակ զգուշացութեան վասն որոյ 'ի նոյն

դի

գիշերի փորեալ զերկիրն, զամ ըստ բուսուցածս և զանձս ելից 'ի մէջ փորձածոյն ծածկեալ հողով և էարկ 'ի վերայ նորա վէմս մեծամեծ, և կարեաց բազում աշխարհս այն տեղին այրիանութաճող. արար զփէմն 'ի կարծիս տեսողացն լու է՝ մարդասպանութի կամ այլ իմն պատահեալ է անդ և սկսան արձակել զհրացանս բազումս 'ի լուր քաղաքին, և հրամայեաց ոմանց իւրոց հատանել զծառս և բերել յափն գետոյն իսկոյն հատին բազում ծառս բերին անդ և կապեցին պարանով շինեալ զլաստ մի մեծ և նստան 'ի վերայ նորա, որք էին երբեմն հարիւր և յիսուն գնացին յայնկոյս գետոյն, և անտի ուստի ընթացմամբ գնացին դէպ 'ի Բէնկլուր:

Իսկ ընդ այգն եղեն վորքն 'ի քաղաքէն զի կալցեն կամ սպանցեն զնա յորժամ հասին անդ ուր էր վրանն նորա և ոչ գտին զոք և տեսին զի վէմս մեծամեծս անկեալ կայ 'ի տեղին անդ և արիւնաթաթ կարծէին թէ սրածութիւն ինչ պատահեալ է 'ի մէջ նոցա զի լուան զձայն հրացանից 'ի գիշերին յայնմիկ, և դարձան 'ի քաղաքն և պատմեցին զամենայն զոր տեսին, և նախարարքն ապուշ մնային թէ զինչ եղեն քանզի գետն ուռուցեալ բարձրացեալ էր և ոչ դիւր հնար փախչելոյ կարծէին թէ զմիմեանս կոտորեցին կամ անկան 'ի գետն, ոչ կարացին ըստոյգ իմանալ թէ զինչ եղեն զի ոչ զոք գտին անդ:

Իսկ յորժամ Փաթի Հէյդարս եհաս 'ի Բէնկլուր երեք մղոնաչափ հեռի 'ի քաղաքէն անդ եկաց 'ի ներքոյ վրանի և առաքեաց միոյն հաւատարմաց իւրոց 'ի քաղաքն առ դ ամենայն բերդապահին կդայլուստ իւր անդ, յորժամ լուաւ բերդապահն (որ էր ազգաւ արաբացի և անուանն սորա կոչէին ալիարաբ) իսկոյն ել ընդ յառաջ նորա իբրև եհաս անդ ել 'ի վրանէն 'ի գիրկս առեալ համբուրէին միմեանց, և մտին 'ի ներքս վրանին, և Ալիարաբն սկսաւ հարցանել թէ՝ զինչ է պատճառ գալստեան նորա, պատասխանեաց թէ մայրս 'ի ներքս բերդին առ լուել քեզ զամ, եղեն երկոքեանն 'ի միասին յանդերձ իւրայնովքն մտին 'ի բերդն և պատմեաց նմա զամ զոր ինչ եղեն 'ի սրնկփաթան, և խնդրեաց ալիարաբէն զի միաբանեսցի զխորհուրդս իւր և նա նոյն ժամայն հնազանդեցաւ նմա որպէս ոք հնազանդեսցէ տեառն իւ-

իւրոյ, և յորժամ ետես զոր հնազանդեաց ինքեան, իսկոյն ա-
ռաքեաց սուրհանդակ մի 'ի Փոնտիչէրի առ 'ի տալ Մահ-
մատալիխանին զպատահեալն իւր զի փութով ժամանեսցէ ին-
քեան, յորժամ լուաւ Մահմատալի խանն իսկոյն գնեաց ի բլու-
րն իւր հրացանս և տարաւ զհետ իւր յորժամ եհաս 'ի Թէնկ-
լուր զօրքն հանդերձ որք էին իբրև երեք հազար զօրս ընտիրս,
յոյժ ուրախ եղև 'ի գալստեան նորա, այնու յետ սկսաւ ժողո-
վել զկամաւորս քաղաքին և զօրս նորագս գումարել եկաց ա-
միս ինն ժողովեաց ութ հազար զօրս որք էին երկու հազար հե-
ծեալ և վեց հազար հետևակ, և չուեաց անտի զօրքն իւրովք
'ի Սրինկփաթան յորժամ եհաս դէպ յանդիման քաղաքին յան-
կարծ դեռ..., և անտի գրեաց թուղթ առ Ըռաճայն թէ՝ Նա-
խարարք քո 'ի վեր չարախօսեցին ինձէն ահա ծառայ քո եկեալ է
առ ութ հազար զօրք ծառայել քեզ որպէս յառաջ ծառայե-
ցի եղբաւրն քո հաւատարմապէս ծառայեալ եմ քեզ, և կնքեաց
եւ ցծառայի իւրոյ տարցէ թուղթն և բերցէ պատասխան թղ-
թոյն ուստի տարաւ թուղթն և դարձաւ առանց պատասխանի
քանզի ոչ կամեցաւ պատասխանել, և երկրորդում աւուրն դրեց
թուղթ բարեւ առ զօրագլուխն Ըռաճային և պատճէն թղ-
թոյն էր այսպէս թէ՝ երեկեան աւուրն ընկալայ զթուղթն զոր
գրես թէ՝ մեք ամենեքեան միախորհուրդ եմք ընդ Դիւանին
կամիմք բառնալ զկեանս Ըռաճային եթէ դու ևս կամիս միաբա-
նիլ ընդ մեզ և դիպուք ամէն զի նորա Դիւանն իսկոյն բացից ըղ-
դրուն քաղաքին և լցից Սպարապետս 'ի վերայ մեր որպէս էիր
յառաջն, առ այս պատասխանեմ ձեզ զի ոչ է ըմբան առնել գոր-
ծ զայս զոր դուք խորհիք և ես ոչ կամիմ միաբանիլ ընդ խոր-
հուրդս ձեր քանզի երդուեալ եմ հաւատարմապէս ծառայել մ
տեառն իմոյ Ըռաճային ողջ լերուք, կնքեաց և գրեաց իւրա-
քանչիւր անուննն զօրագլխացն 'ի վերայ թղթոյն և ետ 'ի ձեռս
լրտեսի միոյ և պատուիրեաց նմա տանիլ 'ի քաղաքն 'ի պալատն
Ըռաճային անդ ցուցցէ նմա և յորժամ գնաց լրտեսն 'ի քաղաքն
նոյնպէս կատարեաց զոր հրամայեալն էր նմա իսկոյն կալան ըղ
լրտեսն և տարան առաջի Ըռաճային յորժամ ընթերցաւ զթուղ-
թն ապշեցաւ և խորհէր 'ի միտ իւրում թէ իցէ ճշմարիտ թէ

ոչ

ոչ, և արձակեաց՝ զլրտեսն, և երրորդում աւուրն գրեաց Թուղթ առ Դրիճանն նոյնպէս և ետ 'ի ձեռս այլ լրտեսի միոյ զի տարցէ և գործիցէ նոյն գործ նա ևս արար նոյնպէս, և յորժամ ընթերցաւ զայն իսկոյն սարսեցաւ 'ի յերկիւղէ եւ 'ի տեղւոջէ իւրմէ ելեալ 'ի ներքս և պատմեաց զամ ցմայրն իւր և մայրն ասաց որդեակ սուտ գիր գիտեմ զի նախարարք քո 'ի զուր չարախօսեցին զնմանէ քանի ամէ զի տեսանեմ որ հաւատարմապէս ծառայէր քեզ արդ լուր խրատոյ իմոյ առաքեա կոչել զնա և տուր պարգևս ինչ և կարգեա՛ նմա Սպարապետ որպէս էրն յառաջագոյն և լուծաւ եղկելիս զոր ասաց մայրն իւր և կոչեաց 'ի ներքս քաղաքին և արար նոյնպէս։

Իսկ յորժամ միւսանգամ. բարձրացաւ աստիճանն իւր, սկսաւ արձակել բոլոր զօրագլուխսն և ամենից զլխաւորաց որք ոչ հնազանդէին նմա, և կարգեաց 'ի վերայ նոցա զօրագլուխ նորս զոր ինքն կամէր որ ամենեքեանն էին իւրայինքն այնու յետ ոչ ոք կայր հակառակ ընդ նմա բացարձակ վարէր ըստ յաճոյից կամացն իւր տայր ռոճիկս զօրացն տուատապէս մինչև բոլոր զօրքն կամէին մեռանիլ վասն նորա, և ինքն հանապազ պարապէր 'ի կիրս զինուորականս և մարզէր զզօրս իւր մեծաւ զգուշութեամբ, բայց հանապազ մտախոհ լինէր թէ՝ որպիսի հնարիւք կալցէ զտէր իւր, և այնու սկսաւ բարեկամութիւն առնել ընդ Դրիճանին հանապազ երթայր պալատն նորա անդ խօսակցութիւնս բազումս առնէին ընդ միմեանց, և 'ի մէջ զրուցատրութեանս ասէր ցԴրիճանն թէ՝ կարծեմ Ըռաճայն կամի ըմբռնել քեզ պարտիս զգուշանալ զի ես խորհրդակցեալ եմ քեզ թէ լինիմ քեզ բարեկամ 'ի կենդանութեան իմում վասն որոյ զգուշացուցանեմ զքեզ զի ես անպարտ լիցիմ դու գիտես, և Դրիճանն կայր 'ի մէջ տարակուսանաց թէ զի արդ լինիցի կամ զինչ առնիցէ զի կեցցէ զկեանս իւր կայր 'ի միջի մտածմանց աւուրս բազումս, և անտի սկսաւ չարախօսել զԴրիճանէն առաջի տեառն իւրոյ և ասել տէր Դրիճանն որ հօրեղբօր որդի քո կամի բառնալ զկեանս քո և ինքն լիցի տէր քաղաքիս որով հետև ես երդուեալ եմ հաւատարմապէս ծառայել քեզ պարտիմ զոր ինչ լսեմ ծանուցանել քեզ ՝և անտի պատրաստ լինիմ կատարել զհրա-

մանս

ձանս քո, արդ խորհեա թէ՝ զինչ կամիս առնել, քանզի լուր
այս ես լուայ 'ի բերանոյ մտերմաց իմոց և ազդ արարի քեզ
դու գիտես թէ զինչ կամիս առնել արա փաղփաղակի յառաջ
քան զի պատահեսցէ քեզ վնաս ինչ, այսպիսի ցանեաց որոմն 'ի
միջի նոցա, և նոքա սկսան նենգել միմեանց և մտախոհ լինէին
թէ որով հնարիւք տայցեն վնաս ինչ միմեանց քանզի երկո-
քեանն 'ի միասին երկնչէին 'ի ժողովրդենէ, և ինքն 'ի փառամո-
լութենէ իւրմէ խունկս առաջի կռոցն մատուցանէր քանզի ինքն
քաջ գիտէր զի 'ի սուղ ժամու ժառանգելոցէր զտէրութիւն
նոցա․ յոյժ ուրախէր 'ի գործս իւր, և ապա կոչեաց բոլոր զօրս
իւր առաջի իւր և սկսաւ հարցանել որքանութիւն ընծայիցն
իւրեանց զոր առան և նոքա պատասխանեցին այսքան և այնքան
առէ ցնոսա այդ ոչէ բաւական ինձ, ես յաւելացուցանեմ ընծա-
յիկս ձեր բայց դուք հաւատարիմ լերուք 'ի գործս ձեր և 'ի խոր-
հուրդս իմ և բաշխեաց նոցա ընծայիկս և պարգևս առատապէս,
և անտի սկսաւ հնարս հնարել 'ի հին գործս իւր, և յորժամ
սկսաւ պատել զգործն զայն որպէս ինքն կամէր, և յաւուր միում
գնաց 'ի տուն վաճառականի միոյ որէր յոյժ հարուստ որոյ անուն
սորայ էր Նարսիդաս (որպէս հարուստ վաճառականի սովոր
անուանեն 'ի Հնդիկս) և խնդրեաց 'ի նմանէ վեշտասան լաք
հունս կամ ոսկի վասն յարկաւորութեան իւրոյ և խոստացաւ որ
հատուցանելոցէ նմա տալ և ետ ցնա զոր խնդրեացն, յորժամ
ընկալաւ նա դրամս այս 'ի Նարսիդասէն այնու սկսաւ առատա-
պէս բաշխել ամենեցուն և քարշել սիրտ ամենեցուն առ
ինքն մինչև կարօղիցէ կատարել իղձ սրտի իւրոյ, և 'ի յայսմ
ժամանակի ինքնէր 'ի տիս երեսուն և երեք ամի և ապաժամ ե-
կև նմա յափշտակել զտէր իւր այնու գնաց 'ի պալատն տեառն
իւրոյ սկսաւ ասել այսպէս թէ՝ տէր ահա մերձէ ժամն զի բառ-
նայցեն զկեանս քո զոր ինչ առնելոցես արա փաղփաղակի և պա-
տասխանեաց Ռաճայն թէ՝ ոչ երբէք կամեցայ վնասել զԴի-
վանն իմ քանզի հօր եղբօր որդի իմէ այժմ ինքն կամի բառնալ
զկեանս իմ․ բարեգէ ինձ բառնալ զկեանս իւր արդ հրամայեմ
քեզ զի յորժամ դդանիցես ժամանակ իսկոյն սպանցես զնա, և
պատասխանեաց սպարապետն ցտէրն իւր, և ասէր տէր ես եր-
դու

դաւեալեմ հաւատարմութեամբ ծառայեմ քեզ և հրամայեալն քոյ
'ի նմին ժամու կատարեմ, բայց երկնչեմ 'ի ժողովրդենէ քումմէ
յետ բառնալոյ զկենաց նորա նոքա ևս սպանցեն զիս քանզի ունի
մեծ ժառանգութեան 'ի տէրութենէ քումմէ թէպէտ պարտ է
ինձ կատարել զհրամանս քոյ և ես պատրաստ եմ բայց աղաչեմ 'ի
վեհութենէ քումմէ զոր ինչ հրամայես լցես գրեա 'ի վերայ թղ-
թոյ մոյ տուր 'ի ձեռս իմ և ես ընթերցից զայն և կատարեցից
զոր ինչ հրամայեալ է 'ի նմա, և անհնարին չէ առ. Ռուստամս այս
գրեաց և ետ 'ի ձեռս Սարգսայետին այսպէս թէ՝ ետու հրաման
քեզ զի յորժամ պատրաստ և դիպօղ ժամ գտցես հօրեղբօր որ-
դւոյն իմոյ 'ի նմին ժամու սպանցես զնա և ոչ ոք կարօղ է հար-
ցանել քեզ վասնէր կամ վասն այր աղագաւ գործեցեր զայդ ե-
թէ ոք իշխեսցէ հարցանել մահու մեռանիցէ, և խորամանկ
Սարգսայետս այս առեալ զթուղթն 'ի ձեռանէ տեառն իւրոյ
երկիրպագ ել արտաքս 'ի նոյն ժամու գնաց 'ի տուն Դիւճանին
եցոյց նմա զթուղթն հրամայեալ և ասէ ցնա տես զինչ հրա-
մանէ այս 'ի վերայ իմ զոր ցուցանեմ քեզ քանզի խոստացեալեմ
քեզ թէ՝ բարեկամ քոյ եմ ոչ երբէք կամիմ պատահեսցէ քեզ
զչարա ինչ արդ խորհեա թէ զինչ կամիս առնել, և Դիւճանն յոր-
ժամ տեսանէ զհրամանն 'ի Ռուստամայէն 'ի ձեռին նորա տարեցաւ
'ի յերկիւղէ սկսաւ աղաչել զնա և ասել թէ այժմ տեսանեմ
զի կենաց իմ ձեռին քոյէ զի իրաւ ասէց հաւատամ որ բարեկամ
իմ ես տուր ինձ խորհուրդ զի այսու փրկեսցիս զկենաց իմ, և
պատասխանեաց նմա թէ այլ ևս ոչ ինչ ունիմ ասել քեզ
թէ ոչ մի միայն տարաւորեա 'ի սրտի քում զի եմ բարեկամ քոյ
արդ ազդեա ինձ զինչ է կամք քոյ ևս նոյն կատարեցից և ասէ
Դիւճանն թէ իցէ հնար բառնալոյ զկենաց հօրեղբօր որդւոյ իմոյ
Ռուստամին և ես իցեմ 'ի տեղի նորա այնու հետ տամ քեզ պար-
գեւս մեծամեծս, և ասէ ցնա թէ ես պատրաստեմ կատարել ըզ-
հրամանս քո բայց դու պարտիս գրել զինչ է կամք քո զի եր-
կնչեմ 'ի բնակչացն քաղաքիս և թշուառական Դիւճանս այս
հաւատաց նմա գրեաց այսպէս բարեկամ իմ Հէյդարալի խան
տամ քեզ հրաման զի սպանցես զհօրեղբօր որդին իմ Ռուստամն
տամ քեզ վարձս չորս լաք հունս և յորժամ կատարեսցէ զայդ-
ամ

ամ ես նստցիմ Ըռաճայ 'ի տեղի նորա այնու յետ գտցես պար-
գեւս մեծամեծս փոխան երախտեաց քոց, առաւ զԹուղԹն և
ել արտաքս գնաց 'ի պալատն Ըռաճային և եցոյց նմա զԹուղԹն
զայն և ասէ տէր մի երկնչիր այլ երկայնամիտ լեր զի ես ընդ
քեզ եմ երդուեալ եմ դնել զանձն իմ 'ի վերայ քո, ժամն
այն զոր պարտէ կոչնուլ զնա ես ազդ արարից քեզ, նշանակէ
և ասաց դիւանին.

Իսկ Յամի Տեառն 1748 միւսանգամ եմուտ 'ի պալատ
Տեառն իւրոյ և ասէ ցնա տէր յայժմ գիշերի ժամն կոչնուլ ըզ
Դիւանին բարցցես պարտս տալ ռոճիկ ծառայից քոց զի եր-
Թիցեն հանկարծահաս 'ի տուն նորա կալցեն զնա և դիցեն 'ի
բանդի կապեալ շղԹայիւք, և ես պահեմ զճանապարհս զօրօք
իմով զի ոչ ոք իշխեսցէ 'ի բնակչացն քաղաքին առնուլ զսուր 'ի
ձեռն իւրում, և ելանէր գնաց 'ի տուն Դիւանին և ասէ ցնա
յայժմ գիշերի պարտս առաքել զծառայս քո 'ի պալատն
Ըռաճային և սպանցեն զնա և ես զօրօքն իմով պահեմ զանձն
քո, ելանէր և գնաց 'ի տեղի իւր, և նոքա սկսան 'ի նմին գի-
շերի զգործն զայն զոր ուսեալ էին 'ի խորամանկ Սպարապետէն
իւրեանց սպանին զԸռաճայն և եդին 'ի բանդի զԴիւանն կապեալ
շղԹայիւք ընդ լուսանալ առաւօտուն անկաւ զդրդումն մեծ 'ի
մէջ քաղաքին և ըռամին որ էր կին Ըռաճային առաքեաց առ 'ի
սպասաւորաց իւրոց այդ ել Սպարապետին իւրեանց յորժամ լու-
եալ նմա Թէ կատարեցաւ զամ 'ի պալատն զօրօքն հանդերձ ե-
կեսցէ զի տեառն իւրոյ անկեալ դնիւր առ եցուց նոցա զանձն
իւր ապաշխարեալ, քանզի ինքն քաջ գիտէր զամ զոր եղեն, և
ապա սկսաւ մեծաւ հանդիսիւ տանել այրել զսպանեալ զէշն
որպէս էր սովորուԹիւն իւրեանց քանզի էին հեԹանոսք, և յետ
այսր ըստ զգէշն եկին 'ի պալատն կին Ըռաճային (այսինքն Ըռա-
նին) կոչեաց զսպարապետն եւ ետ երկու լաք հանս զի նս-
տուսցէ զորդի իւր Ըռաճայ 'ի տեղի հօր իւրոյ քանզի գոյր եր-
կուս որդիս, և նա եմուտ ներքս առեալ էրէց որդին ել ար-
տաքս և բազմեցոյց զնա 'ի գահն և հրամայեաց հարկանել զդր-
պանս և արձակել ԹնդանօԹս 'ի լուր ամենեցուն զի եկեսցեն և
երկիրպագցեն նոր Ըռաճային որպէս էր սովորուԹիւն իւրեանց
և

և անտի հրամայեաց 'ի բերանոյ Նոր Ըռաճայիս ( քանզի էր տղայ մինչև իբրև չորեքտասան ամեայ ) գլխատել զԴիբճանն 'ի հրապարակի փոխանակ վրէժ խնդրութեան արեան հօր իւրոյ, և անտի ինքն եղև Ասպարապետ և Դիբճան կառավարէր զտէրութն որպէս ինքն կամէր բայց էր մտախոհ 'ի գործս իւր և ժողովէր գանձս բազումս :

Իսկ 'ի կատարելն ամին անցելոյ սկսաւ զօրս գումարել զօրաժողով առնէր որք էին իբրև երեսուն հազար որոց չորս հազարն էին հեծեալ և 26 հազարն էին հետևակք, յամի սն 1745 ել քաղաքէն առ 'ի առնել պատերազմ ընդ Մարաթայից յանուն տեառն իւրոյ Նոր Ըռաճային. քանզի մերձ տէրութեան իւրեանց կային չորս ամրոցս մեծ և փոքր ի ձեռին Մարաթայից որոց անուն ամրոցացն էր այսպէս, առաջինն Հէսար, երկրորդն Հէպքօթայ, երրորդն Բալափուռ, չորրորդն, Ձիք բալափուռ, և կալաւ զչորեսին ամրոցս և անտի դարձաւ մեծաւ ուրախութեամբ 'ի Արնկիլաթան և եդ 'ի մէջ ամրոցացն բերդապահս իւրայինքն, և ինքն եկաց ժամանակ մինչ և յուռուր միում խորհեցաւ թէ որով հնարիւք բառնայցէ զկեանս Ըռաճային, կոչեաց ընդդէմ ճոր մի Նարին և ետ նմա պարգևս ինչ և պատուիրեաց նմա թէ յորժամ գայցէ դիպուկ ժամ դեղակուրս առնիցէ տեառն իւրոյ, և այրն այն չար փոխան փոքրիկ պարգևացն ետ ցանէր իւր դեղ մահու և մեռաւ և յորժամ լուան ժողովուրդքն մահ նորա զարմանային 'ի միտս իւրեանց թէ ոչ երբէք առ ունէր ախտրութիւն ինչ զի որպ եղև մահ նորա ոչ ոք իմացաւ հարցանել ինչ, բայց ամենեքեան կարծէին թէ հրամանաւ Ասպարապետին իւրեանց տուեալ իցեն նմա դեղ մահու ընդ այսու բարձաւ զկեանս նորա և տարան զմէջն այրեցին ըստ կարգի իւրեանց և ապա զնոյն խորամանկ Ասպարապետս այս 'ի պաշտօն հանեալ եղբայր Ըռաճային նստոյց 'ի գահն և երկիրպագ նմա տէր կոչելով ( առ էր տղայ մինչև իբրև տասն ամեայ ) և անտի հրամայեաց հարկանել զպատգամս և արձակել խնդութիւն 'ի լուր ամենեցուն և ամենեքեան զայն երկիրպագանել մանուկ Ըռաճայիս, և յետ այնորիկ եկաց անդ ամսօրս սակաւս, և ապա զօրաժողով արար ել 'ի քաղաքէն գնաց դէպ 'ի Սանուր բանձափուռ.

կռուով մեծաւ պատերազմիլ ընդ Հաքիմ խանին որ էր ազգաւ փա_
թան և Հաքիմ խանն ոչ ունէր այնքան զօրս որ յանդիմանէր նմա
հարկեցաւ առաքել առն ՚ի նախարարաց իւրոց և հարցանել
զՓաթթի Հէյդարին թէ զինչ է կամք նորա , և նա պատասխանեց
թէ պարտէք հնազանդիլ ինձ և թողուլ զ բոլոր տէրութիւնս
ձեր ընդ իշխանութեամբն իմով և Հաքիմ խանն շինեսցէ Պա_
լատ մի արտաքոյ քաղաքին անդ բնակեսցի ընտանեօքն իւրովք
եւ տաց նմա իւրաքանչիւր ամի երկու լաք հունս առ ՚ի ապրուստ
իւրոյ և ինքն ոչ ունելով իշխանութիւն ինչ ՚ի վերայ քաղա_
քացս յայսմիկ և եթէ ոչ հաճի ասացելոցս ամենեքեան անդ ՚ի
սուր մաշեցից , և դ՚նոյն նախարարս այս ազդ արար տեառն իւ_
րոյ զամ , և նոքա միաբանին անձամբ պատրաստեցան ընդունիլ զամ
և անդր սկսան հաստատել . զգիր դաշանց եւ առեալ զմիմեանս տի_
րեաց զամ երկիրս բերդս որք էին ՚ի տէրութեան Հաքիմ խանին
և կարգեաց ՚ի վերայ քաղաքացն իշխանս և բերդապահս և հրա_
մայեաց նոցա առնել տալ նմա զերկուս լաք հունս զոր խոս_
տացաւ նմա , և ասեն թէ եկամուտս քաղաքացն այնուհետև էին
իբրև տասն և ութն լաք հունս վասն արար ՚ի յանունն մանուկ
Ըռանճայիս ։

Իբր կատարեաց զայս ամ դարձաւ ՚ի Սրինկփաթն սկսաւ
մտանել ՚ի քաղաքն մեծաւ հանդիսաւ որպէս թագաւոր առն մտ_
ցէ ընդ քաղաք իւր մեծաւ հանդիսական բարձրեալ դրօշակս
հարկանել զորատապանս արձակել թնդանօթս և հրացանս , և
ժողովուրդք քաղաքին ամենայն զի այնպիսի փառօք և փքացմամբ
մտանէր քաղաքն սարսեցան ՚ի ահէ նորա ամենեքեան ելին ընդ
յառաջ նորա մուծին ՚ի ներքս , և յորժամ եմուտ ներքս դնաց
՚ի տուն իւր իսկոյն հրամայեաց շինեսցեն զպալատ մի մեծ և այ_
նիւ փառն բնակութեան իւրոյ մերձ ՚ի պալատն Ըռանջային , և ՚ի
նմին ժամու կատարեցին զամ , և յորժամ պատրաստեցին զամ
պալատն այդ արարին նմա զի պատրաստի կայ զամ հրամայեաց
իւրոյն բնակեցաւ անդ , և անդ նստէր հանապազ առնէր դա_
տաստանս և զկրօնաւորս պատժէր զմեղաւորս առնէր կարգադրու_
թիւնս նորս զամ ըստ հաճոյից կամաց իւրոց և ոչ ոք կայր որ
իշխեսցէր ասել ինչ քանզի ամենեքեան սարսէին ՚ի նմանէ , և ան_
տի

